

ԵՐԱՐՈՒԴ ԾԱՊԱԶԱՐՈՒ

04 ՄԱՅԻՍ 2008

Կիրակնօրեայ ընթերցումներ	էջ 1-2
Բացատրութիւն	էջ 2-3
Ժամանակացոյց եւ Ծանուցում	էջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ

«ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵՐԸ»

ԳԻՐՔԷՆ

(23.12-35)

Յաջորդ առաւօտ կարգ մը հրեաներ իրարու քով եկան եւ իրենք զիրենք նզովքի տակ դնելով երգում ըրին չուտել ու չխմել՝ մինչեւ չսպաննեն Պօղոսը: Քառասուն հոգիէն աւելի էին այս երգումը ընողները: Ասոնք մօտեցան քահանայապետներուն եւ երէցներու եւ ըսին. «Մենք նզովքի տակ դնելով մենք մեզ երգում ըրինք բան չճաշակել, մինչեւ Պօղոսը չսպաննենք: Դուք ատեանին անունով հազարապետին լուր դրկեցէք որ զայն ձեզի դրկէ, պատճառաբանելով թէ կ'ուզէք իր մասին աւելի ստոյգ տեղեկութիւն ունենալ: Իսկ մենք պատրաստ կ'ըլլանք արդէն եւ տակաւին հոս չհասած՝ կը սպաննենք զինք»:

Պօղոսի քեռորդին այս դաւադրութիւնը իմանալով, եկաւ զօրանոց եւ Պօղոսին պատմեց: Պօղոս հարիւրապետներէն մէկը կանչելով ըսաւ. «Այս պատանին հազարապետին տար, որովհետեւ իրեն ըսելիք մը ունի»: Հազարապետը պատանիին ձեռքէն բռնելով մէկ կողմ տարաւ եւ հարցուց. «Ի՞նչ ունիս ըսելիք»: Պատանին ըսաւ. «Հրեաներ համաձայնեցան քեզմէ խնդրել որ վաղը Պօղոսը Ատեան դրկես, որպէս թէ աւելի մանրակրկիտ հարցովործելու համար զայն: Բայց մտիկ մի՛ ըներ իրենց. որովհետեւ իրենց մէջէն քառասունէ աւելի մարդիկ իրենք զիրենք նզովքի տակ դնելով երգում ըրած են չուտել ու չխմել՝ մինչեւ չսպաննեն զայն. եւ հիմա դարան մտած ու պատրաստ՝ կը սպասեն քու հրամանիդ»:

Հազարապետը պատանին ճամբեց, պատուիրելով. «Ուե՛լ մէկու մի՛ ըսեր ինչ որ ինծի յայտնեցիր»: Ապա հարիւրապետներէն երկուքը կանչելով ըսաւ. «Երկու հարիւր հետեւակ, եօթանասուն հեծեալ եւ երկու հարիւր տիգաւոր զինուորներ թող պատրաստ

ըլլան գիշերուան ժամը իննին դէպի Կեսարիա ճամբայ ելլելու: Պօղոսին համար ալ գրաստ պատրաստեցէք եւ զայն ապահով կերպով Ձեւիթս կառավարիչին հասցուցէք»: Նամակ մըն ալ գրեց, հետեւեալ բովանդակութեամբ.

«Կլօդիոս Լիպիասի կողմէ՝ նորին գերագանցութիւն Յելիս կառավարիչին: Ողջո՛յն:

«Հրեաներ բոնք էին այս մարդը եւ զինք սպաննելու վրայ էին: Իմանալով որ հոռմայեցի է, վրայ հասայ եւ զինք ազատեցի: Ուզեցի գիտնալ թէ ի՛նչ յանցանքով կ'ամբաստանեն զինք. ուստի իրեց Ատեանը տարի զինք, եւ հասկցայ թէ իրեց Օրէնքին վերաբերող խնդրի մը համար կ'ամբաստանեն. այսինքն մահուան կամ բանտարկութեան արժանի յանցանք մը չունի: Բայց երբ ինծի իմացուցին թէ հրեաներ դաւ մը լարած են իր կեանքին դէմ, զայն իսկոյն քեզի դրկեցի, հրամայելով որ ամբաստանողները քեզի՛ ներկայացնեն իրեց ըսելիքները: Ո՛ղջ եղիր»:

Հազարապետին հրամանին համաձայն, հետեւակ զինուորները առին Պօղոսը եւ գիշերով Անտիպատրիս փոխադրեցին, եւ յաջորդ օրը զայն իրենց ընկերացող հեծեալներուն յանձնելով, իրենք զօրանոց վերադարձան: Հեծեալները Կեսարիա հասան եւ նամակը կառավարիչին տալով Պօղոսն ալ անոր ներկայացուցին: Կառավարիչը նամակը կարդաց եւ Պօղոսին հարցուց թէ կայսրութեան ո՞ր նահանգէն է. եւ հասկնալէ ետք թէ Կիլիկիայէն է, ըսաւ. «Երբ որ քեզ ամբաստանողները գան՝ կը լսեմ քեզ»: Եւ հրամայեց որ զայն Հերովդէսի ապարանքին մէջ պահեն:

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ

(5.13-21)

Ասիկա գրեցի ձեզի, Աստուծոյ Որդիին հաւատացողներուդ, որպէսզի գիտակցիք՝ թէ յաւիտենական կեանք ունիք: Ուստի համարձակ կերպով կը դիմենք Աստուծոյ, այն վստահութեամբ, որ երբ իր կամքին համաձայն բան մը խնդրենք՝ կը լսէ մեզի: Եւ երբ գիտենք թէ մեր խնդրանքները կը լսէ, գիտենք նաեւ թէ պիտի ստանանք ինչ որ կը խնդրենք իրմէ:

Երբ տեսնես, թէ հաւատացեալներէն մին գործեց մեղք մը, որ մահացու չէ, աղօթէ Աստուծոյ՝

ԺԴ.  
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Հարցումներ.

1.- Համբարձումը ինչպե՞ս ներկայացուած կամ հասկցուած է Նոր Կտակարանին մէջ: Եւ ինչպե՞ս կը տեսնուի այսօր:

2.- Յարուցեալ Քրիստոսը քառասուն օրեր մնաց երկրի վրայ:

3.- Տօնին Ս. Գրային ընթերցումները:

Պատասխաններ.

1.- Համատեսական աւետարաններէն երկուքը (Մարկոս եւ Ղուկաս) կարն ցկարագրութեամբ կ'ակնարկեն Քրիստոսի համբարձումին: Մարկոսի աւետարանին վերջաւորութեան գրուած է. «Տէր Յիսուս աշակերտներուն հետ խօսելէ ետք երկինք համբարձաւ եւ Հօր Աջ Կողմը նստաւ» (16:19): Ղուկասի աւետարանին մէջ. «Ապա տարաւ զանոնք մինչեւ Բեթանիա եւ ձեռքերը վեր բարձրացնելով՝ օրհնեց զանոնք: Եւ մինչ կ'օրհնէր, բաժնուցաւ անոնցմէ, դէպի երկինք բարձրանալով» (24:50-51): Իր Առաքելներուն Գործերը գիրքին մէջ, համբարձման ցկարը Ղուկաս այսպէս գծած է. «...խօսքերէն ետք, մինչ անոր կը նայէին, Յիսուս երկինք համբարձաւ, եւ ամպ մը ծածկեց զինք անոնց տեսողութենէն: Եւ երբ առաքելները իրենց աչքերը երկինք յառած՝ Յիսուսի մեկնիլը կը դիտէին, ահա երկու սպիտակագգեստ մարդիկ երեւցան անոնց եւ ըսին.- Ով գալիլիացիներ, ինչո՞ւ կեցեր երկինքը կը դիտէք: Այս Յիսուսը որ երկինք համբարձաւ, օր մը դարձեալ պիտի գայ այնպէս՝ ինչպէս անոր երկինք երթալը տեսաք» (1:9-11):

Նոր Կտակարանեան արդի բանասիրութիւնը կ'ենթադրէ, որ Մարկոսի աւետարանին 16:9-20 համարները 2-րդ դարու յաւելում են: Այս ենթադրութիւնը ընդունուի կամ ոչ, յայտնապէս համբարձման իբր աչքերու առջեւ կատարուած դէպք լայն ցկարագրութիւնը՝ Ղուկասի Առաքելներուն Գործերը գիրքէն կու գայ, անկէ է, որ կը բխի եղելութեան տեսողական-միջոցային երեւակայումին աւանդութիւնը: Մեր միջնադարեան հայերէն Զաքարիա Կթղ. Զագեցի պերճաբարբառ հառ մը ունի, որուն անունն է՝ «Ի Մեծի Համբարձման Տեսուն Մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Անկէ կը փառել հատուած մը՝ տեսողական-միջոցային երեւակայումի աւանդութեան որպէս օրինակ: Ահա թարգմանաբար. «Եւ մինչ երկինք կը բարձրանար անհատելի եւ մարմնացեալ Լոյսը, եւ երջանիկ սուրբ առաքելները զարմացած կը նայէին, ամպը անոնց աչքերէն պարսածակեց Փառաց Տէրը: ...Եւ երբ իրենց աչքերը վեր յառած կը զարմանային արփիաքերաչ եւ գերագանց երեւոյթին վրայ, համատարած պայծառագոյն լոյսը շրջապատելով կը պարունակէր սուրբ եւ երջանիկ ալեկանս Զիթենաց լեռը, եւ որուն սաստիկ ու գերարեգակնային լոյսէն ծածկուելով կը թափէին արեւուն անշիջանելի ոսկեհանձն ցառագայթները, հակառակ որ երրորդ ժամն էր (= առաւօտեան ժամը 9.00): Եւ մինչ երանելի առաքելները պղնձ կը զարմանային

որ կեանք տայ անոր: Ասիկա կ'ըսեմ միայն անոնց համար, որոնց մեղքերը մահացու չեն, որովհետեւ մահացու մեղքեր ալ կան, որոնց համար չեմ ըսեր՝ որ աղօթէք: Ամէն անիրաւու թիւն մեղք է, բայց ամէն մեղք մահացու չէ:

Գիտենք, թէ ով որ Աստուծմէ ծնած է՝ չի մեղանչեր, այլ Աստուծոյ ծնունդը՝ Քրիստոս, կը պահպանէ զայն եւ չարը անոր չի մօտենար: Թէպէտ ամբողջ աշխարհը չարին ենթակայ ըլլայ, մենք գիտենք՝ թէ Աստուծմէ ենք: Եւ գիտենք, թէ Աստուծոյ Որդին եկաւ ու բացաւ մեր միտքերը, որպէսզի ճանչնանք ճշմարիտ Աստուծոյ: Մենք միացած ենք ճշմարիտ Աստուծոյ եւ անոր Որդուին Յիսուս Քրիստոսի: Ա՛ն է ճշմարիտ Աստուծոյ եւ յաւիտենական կեանքը:

Որդեակներս, դուք ձեզ կուռքերէ հեռու պահեցէք:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԵՆ  
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ  
(12.12-33)

Յաջորդ օր ժողովուրդի մեծ բազմութիւն մը, որ գատիկ տօնին առիթով Երուսաղէմ եկած էր, երբ լսեց թէ Յիսուս Երուսաղէմ կու գայ, արմաւենիի ճիւղեր առաւ եւ Յիսուսը դիմաւորելու ելաւ, բարձրաձայն աղաղակելով.

«Ովսանա՛,

օրհնեա՛լ ըլլայ ան որ կու գայ Տիրոջ անունով, Իսրայէլի թագաւորը»:

Յիսուս էջ մը գտնելով նստաւ անոր վրայ, ինչպէս որ Սուրբ Գիրքերուն մէջ գրուած է.

«Մի՛ վախնար, ո՛վ Երուսաղէմ, Սիոնի՛ աղջիկ, որովհետեւ թագաւորդ ֆեզի կու գայ իշու մը աւանակին վրայ նստած»:

Յիսուսի աշակերտները այս բոլորը չհասկցան ատենին, բայց երբ Յիսուս փառաւորուցեցաւ՝ այն ատեն յիշեցին թէ այս կատարուածները Յիսուսի համար գրուած էին եւ իրենք այդ գրուածն էր որ կատարեցին: Բոլորն ալ կը վկայէին թէ Յիսուս Ղազարոսը կանչեց գերեզմանէն եւ զայն մեռելներէն յարուցանեց: Այս իսկ պատճառով Երուսաղէմ գտնուողները բոլորն ալ զինք դիմաւորելու ելան, որովհետեւ լսած էին թէ ի՛նչպէս ան յարուցեան հրաշքը գործած էր: Իսկ փարիսեցիները իրարու կ'ըսէին. «Կը տեսնէ՞ք որ բան մըն ալ չէք կրնար ընել. ահա ամբողջ աշխարհը իրեն կը հետեւի»:

Տօնին առիթով կարգ մը յոյներ ալ եկած էին Երուսաղէմ՝ Աստուծոյ երկրպագելու: Անոնք մօտեցան Փիլիպպոսի, որ Գալիլիայի Բեթսայիդա քաղաքէն էր, եւ աղաչելով ըսին. «Տէ՛ր, կ'ոզենք Յիսուսը տեսնել»: Փիլիպպոս, եկաւ Անդրէասին ըսաւ եւ երկուքը միասին Յիսուսի ներկայացուցին անոնց խնդրանքը: Յիսուս պատասխանեց. «Ահա մարդու Որդիին փառաւորուելու ժամը հասաւ»:

նորաբանացի եւ հրաշափառ տեսարանին վրայ, որ կը գերազանցէր Թաբոր լեռան վրայ իրենց տեսածը, նաեւ արեգակնագեղ ճառագայթները՝ Սիմա լեռան Մովսէսի եղած յայտնութեան ու Քորնելիոս լեռան վրայ՝ Եղիայի եղած երեւումին: Առաքեալները Ձիթենեաց լեռան այս պատկերն ու Աստուծոյ շնորհքը իրենց հոգիին մէջ ամուր պահեցին եւ չձգեցին, որ անոնք գետին իյնալով կործանին:

Եւ ահա երկու սպիտակագգեստ այրեր երեւցան անոնց: Կը թուի թէ ասոնք հրեշտակներու բանակներուն երկու զօրավարներն են՝ Միքայէլը, որ Հին Ուխտին միջնորդն է եւ սպասաւորը, եւ Գաբրիէլը՝ որ Նոր Ուխտին պատրաստողն է եւ մատակարարը: ...Եւ այն երկնաւոր գինուորները առաքեալներուն կը պատմէին անոր աննառելի գալուստը»:

Պէտք է այստեղ արձանագրել, որ Քրիստոսի համբարձումը եկեղեցւոյ առաջին հաւատալիքներէն էր, թէեւ տարբերակ փոխաբերութեամբ ակնարկուած Նոր Կտակարանի երկայնքին: Ղուկասեան պատկերապատմութիւնը չկայ Նոր Կտակարանի միւս գրողներուն մօտ. անոնք Քրիստոսի յարութեան եւ անոր Հօր Աջ Կողմը նստելուն\* միջեւ երկնապաղ դէպք մը չեն յիշատակեր: Մատթէոս աւետարանիչին համար՝ յարուցեալ Քրիստոսը իր երեւումներէն ետք՝ իբր Տէր Հօր Աջ Կողմը պիտի նստէր (Մտ 22:24). Մարկոս աւետարանիչին համար (եթէ անոր աւետարանին մէջ ներկայացուած համբարձման դրուագը յետագայ յաւելում անուի)՝ ան իբր Մարդու Որդի «ամենագօր Աստուծոյ Աջ Կողմը» պիտի նստէր (Մկ 14:62). Յովհաննէս աւետարանիչին համար՝ իբր Մարդու Որդի պիտի ելլէր հոն՝ ուր էր նախապէս (Յհ 6:62) կամ Հօր մօտ պիտի ելլէր (Նոյն, 20:17). Պետրոս Առաքեալի համար յարուցեալ Յիսուս Քրիստոսը երկինքէն էր ելած եւ Աստուծոյ Աջ Կողմը նստած է (Ա. Պտ 3:22). Պողոս Առաքեալի համար եւս՝ յարուցեալ Քրիստոսը Հօր Աջ Կողմն է (Հռ 8:34) եւայլն եւայլն:

20-րդ դարու աստուածաբաններէն Ուիլիլմ Պարգլէյ գրած է. «To the modern mind one of the greatest difficulties in the Ascension is the word “ascension” itself. In Acts 1.11 the Ascension is described by the word *analambanein*, which means “to take up”; in Acts 1.9 it is described by the word *epairein*, which means “to lift up”; although the words are different, the picture is the same. (...) It is significant to note that this very word *analambanein* is used in the Greek Old Testament about two men whose deaths were strange and mysterious. It is used of Elijah, who went up by a whirlwind into heaven (II Kings 2.11); and in Ecclesiastics it is used of both Elijah and Enoch, who were taken up from the earth (Eccl. 48.9; 49.14). The fact is that no one writing in either OT or NT times would think in any other way. If anyone in those days wished to describe a mysterious ending to a life which was victorious over death, there is no other way of speaking which he could use (...) we do not know what actually happened at the time of the Ascension. It is not the picture which is important but the truth behind the picture. The picture is only the symbolic envelope of the truth.

...It must be clear that the Ascension was an absolute necessity. It was in the first place necessary that Jesus should remain visibly with his disciples for some time after his Resurrection. That was necessary in order that they might be truly and fully convinced that he was alive, that his legacy to them was not, as

someone has put it, “dead and inoperative information”, but a living presence (...) Some quite definite end to interim period after Resurrection was necessary (...) some terminating event had to happen, and that event is the Ascension»:

3.- Ըստ Առաքեալներուն Գործերը գիրքին, յարութենէն մինչեւ համբարձում՝ 40 օրեր (նուագագոյնը) երկրի վրայ պիտի մնար Քրիստոս (1:3): Մարկոս աւետարանիչ ժամանակ չէ նշած, Մատթէոս աւետարանիչ՝ նոյնպէս: Ղուկասի աւետարանին մէջ ալ ժամանակ չէ նշուած: Յովհաննէս աւետարանիչ՝ 8 օրեր կը նշէ (21:26):

40 օրերը պէտք է բառացիօրէն առնել: Ս. Գիրքին մէջ թիւերու խորհրդանշական գործածութիւնը մեծ է: «40 օրեր»ով կը հասկցուէր՝ նկատառելի ժամանակ մը: Ուստի, ըսուածն է թէ՛ յարուցեալ Քրիստոս բաւական ժամանակ մը իր աշակերտներուն հետ եղաւ:

4.- Համբարձման տօնին Ս. Գրային ընթերցումներն են. Առաքեալներուն Գործերը գիրքէն՝ 1.1-14. եւ Մատթէոսի աւետարանէն՝ 28:16-20:

*Առաջին ընթերցումը:* Աւետարանիչ Ղուկաս կը գրէ ոմն Թէոփիլոսի, որ հաւանաբար հռոմէացի պաշտօնատար մըն էր՝ հետաքրքրուած Յիսուսի կատարած գործերով եւ սորվեցուցածներով, նաեւ նորակազմ եկեղեցւոյ առաքելութեամբ: Հատուածը երեք կէտեր ունի.

ա.- Համբարձման եղելութիւնը նկարագրել:

բ.- Արձանագրել՝ որ անիկա տեղի ունեցած է Ս. Հոգիին գալստեան խոստումով:

գ.- Ամրացնել յոյսը՝ թէ համբարձեալ Քրիստոսը ետ պիտի գայ այնպէս՝ ինչպէս երկինքէն ելաւ:

*Երկրորդ ընթերցումը:* Նախքան այս հատուածի գլխաւոր կէտերուն համառօտումս, ըսեմ որ ասիկա ամբողջ միջնադարուն, ինչպէս աւանդապաշտ ներկային մէջ, Քրիստոսի երկինքէն բարձրանալը կանխող անմիջական պահ տեսնուած է:

Յետ յարութեան, Քրիստոս Գալիլիոյ լեռան վրայ իր աշակերտներուն կ' երեւի: Այս փորձառութիւնը ոմանց համար հաւատքի, ոմանց համար կասկածի առիթ կ'ըլլայ: Հատուածին էական կէտերը.

ա.- Յարուցեալ Քրիստոսը թէ՛ երկինքի մէջ եւ թէ՛ երկրի վրայ «ամէն իշխանութիւն» ստացած է:

բ.- Ան իր այդ իշխանութեամբ, ըստ իր Հօր օրինակին, աշակերտները կ'առաքէ՝ ուսուցանելու, յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ մկրտելու, եւ իր տուած պատուիրանները գործադրել սորվեցնելու:

գ.- Քրիստոս իր աշակերտներուն առաքելութեան գործակից է, եւ անոնց հետ է մինչեւ աշխարհի վախճանը:

Երկու հատուածներուն նպատակն է Քրիստոսի տիեզերական իշխանութիւնը յայտնել: Իշխանութիւն մը՝ որ ան կը բաժնէ Ս. Երրորդութեան միւս երկու դէմքերուն՝ Հօր Աստուծոյ եւ Ս. Հոգիին հետ: Եւ թէ՛ այդ իշխանութիւնը եկեղեցաստեղծ է, որ «մինչեւ աշխարհի վախճանը» առաքելութիւն կը պատուիրէ, եւ եկեղեցւոյ առաքելութիւնը կ'արարէ գործակցաբար հաւատացեալներուն:

Հոսի  
ԳԶ

Յաջորդ շաբաթուայ  
Ժամանակացոյց

**ՀՈԳԵԳԱԼՍԵԱՆ  
ԱՂՕԹՔՆԵՐ**

Ամէն առաջօր ժամը  
10.00-ին  
5-10 Մայիս 2008

Շաբաթ, 10 Մայիս 2008

18.30 > Ս. Գրային սերտողութիւն՝  
Յայ երիտասարդներուն համար

Կիրակի, 11 Մայիս 2008

ՀՈԳԵԳԱԼՈՒՄ

09.30 > Առաւօտեան ժամերգութիւն  
11.00 > Ս. Եւ անմահ Պատարագ

ՅԱՏՈՒԿ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ  
ԱՐԴԻ ԹԵՄԱՆԵՐՈՎ՝

ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ  
ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

ԱՍԷՆ ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՆԵՐԸ  
ԺԱՄԸ 6:30

**ՀԻՔԱՆԴՆԵՐՈՒ ԱՅԵԼՈՒԹԻՒՆ**

Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ. Տ.  
Գառնիկ Քինյ. Գոյունեանին.

514 331 5445 x203 կամ 514 909 5203 քիւիմ:

**ՀՈԳԵՒՈՐ ՀԱՄԵՐԳ**

Հոգաւորութեամբ՝  
ԳԱՆՏԱՅԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ  
ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Կաշապերոտութեամբ՝  
Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋԱՆՈՂԱՆԻՍ ՄԱՅՐ  
ԵԿԵՂԵՇՈՅ  
ԵՒ  
Ս. ԳԵՐՈԳ ԵԿԵՂԵՇՈՅ

ՆՈՒՐՈՒԾ  
ԱՌԱՋԱՆՈՂ՝  
**ԳԵՐՇ. Տ. ԽԱԺԱԿ**  
**ԱՐՔ. ՅԱԿՈԲԵԱՆԻ**  
40-ԱՄԵԱՅ ՀՈԳԵՒՈՐ  
ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ

ԳԵՂԱՐՈՒԹԵԱՍԿԱՆ ՅԱՅՏԱԳՐԻՆ  
ԿՐ ԱՅԱՆԿՅՈՒՆ.

ՅԱՄԻԿ ԳԱՍՊԱՐԵԱՆ, ՅԱՄԻԿ  
ԳԱԲԱՍԵԱՆ, ՅԱՄԻԿ ԻՆՃԷՃԻԿԵԱՆ

«Նոր Ծաղիկ» Երգաշուրթեր՝  
ԽԱՐԵՎԱՐՈՒԹԵԱՄԸ ԷԼՈ ՀԱՐՊՈՅԵԱՆԻ  
ԵՐԳԵՀՈՒԱՀԱՐՈՒԹԵԱՄԸ՝  
ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆԵԱՆԻ

Ուրբաթ, 9 Մայիս, 2008-ի  
Երեկոյեան ժամը 8.00-ին  
Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋԱՆՈՂԱՆԻՍ ՄԱՅՐ  
ԵԿԵՂԵՇՈՅ ՄԷՉ